«Ֆրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն


4 Անկախ աուդիտորի հաշվետվություն

6 Շահույթի և վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

8 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

9 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ

11 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


---

| | |
|---|---|
| Կազմակերպական-իրավական ձևը՝ | Ներդրումային սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| Հիմնական գործունեության նկարագիրը՝ | Հավատարմագրային կառավարում |
| Գործադիր տնօրեն՝ | Ամալյա Հակոբյան |

Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ Մասնակցին*

**Կարծիք**

Մենք աուդիտ ենք ենթարկել «Փրայմ Կապիտալ» ներդրումային սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2018թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

**Կարծիքի հիմք**

Աուդիտն անցկացրեցել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:*

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

**Այլ հարց – աուդիտի շրջանակները**

Ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտը իրականացվել է այլ կազմակերպության կողմից, որը 09.04.2018թ.-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք սխալի կամ խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց՝ ի թիվս այլ հարցերի տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

BDO

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր խնդիրների և կապակցվածությունների վերաբերյալ, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Հրաչյա Հովհաննիսյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
01 մարտի, 2019թ.
ք.Երևան

BDO

«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Ծան. | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | | 92 | 2,077 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | | - | - |
| **Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ** | | 92 | 2,077 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 5 | 13,526 | 37,358 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | | (99) | (39) |
| **Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ** | | 13,427 | 37,319 |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից | 6 | 8,286 | 6,210 |
| Գործառնական եկամուտ | | 21,805 | 45,606 |
| Ընդհանուր գործառնական և վարչական ծախսեր | 7 | (28,816) | (27,482) |
| Այլ գործառնական ծախսեր | | (477) | (559) |
| **Շահույթ մինչև հարկումը** | | (7,488) | 17,565 |
| Շահութահարկի գծով ծախս/(եկամուտ) | 8 | 3,123 | (2,340) |
| **Շահույթ հարկումից հետո** | | (4,365) | 15,225 |
| Այլ համապարփակ ֆինանսական աղյունք | | - | - |
| **Համապարփակ ֆինանսասական արդյունք** | | (4,365) | 15,225 |

Գործադիր տնօրեն
Ամալյա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ
Արթուր Հարությունյան
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծան. | 2018թ.<br>հազ. դրամ | 2017թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | 7,275 | 21,275 |
| Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ | 9 | 86,807 | 87,957 |
| Հիմնական միջոցներ | | 207 | 587 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 10 | 3,687 | 564 |
| Այլ ակտիվներ | 11 | 5,514 | 26,692 |
| Ընդամենը ակտիվներ | | 103,490 | 137,075 |
| **Պարտավորություններ** | | | |
| Պահուստներ | 12 | 3,889 | 3,109 |
| Այլ պարտավորություններ | | 18 | 18 |
| Ընդամենը պարտավորություններ | | 3,907 | 3,127 |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 80,000 | 80,000 |
| Գլխավոր պահուստ | | 1,650 | 1,150 |
| Չբաշխված շահույթ | | 17,933 | 52,798 |
| Ընդամենը սեփական կապիտալ | | 99,583 | 133,948 |
| *Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ* | | 103,490 | 137,075 |

*Ֆինանսական հաշվետվությունները (էջ 7-30) հաստատվել են «Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ ղեկավարության կողմից 2019թ. մարտի 1-ին, ստորագրությամբ*

| | |
|---|---|
| Գործադիր տնօրեն<br>Ամալյա Հակոբյան | Գլխավոր հաշվապահ<br>Արթուր Հարությունյան<br>«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ |

«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | 2018թ.<br>հազ. դրամ | 2017թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Ստացված տոկոսներ | 92 | 1,555 |
| Վճարված կոմիսիոն գումարներ | (8,029) | (7,857) |
| Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներներից օգուտ (վնաս) | - | 14 |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | - | 66 |
| Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | (13,953) | (13,318) |
| Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր | (5,460) | (5,528) |
| Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներներից նվազեցում (ավելացում) | 9,436 | (46,949) |
| Այլ գործառնական ակտիվների նվազում (ավելացում) | 35,155 | 20,056 |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը | 17,241 | (51,961) |
| Վճարված շահութահարկ | (1,167) | (7,966) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | 16,074 | (59,927) |
| | | |
| *Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (74) | (33) |
| Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | (74) | (33) |
| | | |
| *Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Վճարված շահաբաժիններ | (30,000) | - |
| Զուտ դրամական հոսքեր ստացված Ֆինանսավորման գործունեությունից | (30,000) | - |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում) | (14,000) | (59,960) |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (851) |
| Դրամական միջոցների մնացորդներ տարվա սկզբում | 21,275 | 82,086 |
| Դրամական միջոցների մնացորդներ տարվա վերջում | 7,275 | 21,275 |

«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Կանոնադրական կապիտալ | Գլխավոր պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 01.01.2018թ. դրությամբ | 80,000 | 1,150 | 52,798 | 133,948 |
| Մասհանումներ գլխավոր պահուստին | - | 500 | (500) | - |
| Շահաբաժին | - | - | (30,000) | (30,000) |
| Համապարփակ եկամուտ | - | - | (4,365) | (4,365) |
| 31.12.2018թ. դրությամբ | 80,000 | 1,650 | 17,933 | 99,583 |

| | Կանոնադրական կապիտալ | Գլխավոր պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 01.01.2017թ. դրությամբ | 80,000 | 440 | 38,283 | 118,723 |
| Մասհանումներ գլխավոր պահուստին | - | 710 | (710) | - |
| Համապարփակ եկամուտ | - | - | 15,225 | 15,225 |
| 31.12.2017թ. դրությամբ | 80,000 | 1,150 | 52,798 | 133,948 |

«Ֆրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ

ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն


1. Ընկերության վերաբերյալ ........ 11
2. Պատրաստման հիմունքներ ........ 11
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ ........ 14
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում ........ 14
5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ ........ 19
6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից ........ 19
7. Ընդհանուր գործառնական ծախսեր ........ 19
8. Շահութահարկի գծով ծախս ........ 20
9. Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ ........ 21
10. Հետաձգված հարկային ակտիվներ ........ 21
11. Այլ ակտիվներ ........ 22
12. Պահուստներ ........ 22
13. Պայմանական պարտավորություններ ........ 22
14. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն ........ 23

Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ ........ 30

ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընկերության վերաբերյալ

«Փրայմ Կապիտալ» Ներդրումային ՍՊԸ-ն (Ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2013թ. նոյեմբերի 14-ին: Ընկերության նպատակն է իր տիրապետմանը հանձնված հաճախորդին պատկանող և նրա օգտին կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարումը՝ հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: 2014թ․ հունվարի 24-ին Ընկերությունը ստացել է արժեթղթերի փաթեթի կառավարման թիվ 0012 լիցենզիա:

Ընկերության բոլոր ակտիվները և պարտավորությունները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հանրապետության 44/2:

Կազմակերպության միակ մասնակիցն է Ներսես Սարինյանը:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալներով կազմել է 6 մարդ (2017թ.՝ 6 մարդ):

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 14-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

*Չափման հիմքերը*

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա՝ բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

*Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ*

*ա.* 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 9 "Ֆինանսական գործիքներ";
- ՖՀՄՍ 15 "Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ";
- ՖՀՄՄԿ 22 "Արտարժույթով գործարքներ կանխավճարային եղանակով":

Նշվածներից ոչ մեկը չունի նշանակալի ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

*բ) Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել*

Հետևյալ նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել և վաղաժամկետ չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվություններում, կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

| # | Հրապարակում | Հրապարակման որդեգրման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը | Ժամկետը, երբ նախատեսվում է ՖՀՄՍ-ի կիրառումը | Ժամկետը, երբ Կազմակերպությունը պլանավորում է առաջին անգամ կիրառել հրապարակումը | Առաջին կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվության վրա |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՖՀՄՍ16 Վարձակալություն (2017) | *ՖՀՄՍ 16 ստանդարտի համաձայն վարձակալը ճանաչում է վաձակալվող գույք հանդիսացող ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունը: Վաձակալվող գույք հանդիսացող ակտիվները դիտարկվում և մաշվում են այլ ոչ ֆինանսական ակտիվների նման, իսկ պարտավորության գծով հաշվարկվում է տոկոսագումար: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբում չափվում է վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք ապագա վարձավճարների ներկա արժեքով:* | 2019թ. Հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է | 2019թ. հունվար | Ազդեցությունն դեռևս պետք է որոշվի |
| 2 | ՖՀՄՄԿ 23 Շահութահարկի գծով անորոշություն (հրապարակվել է 2017թ. հունիսին) | *Մեկնաբանությունը ներկայացնում է, թե ինչպես որոշել հարկվող շահույթը/վնասը, հարկային բազան, չօգտագործված հարկային վնասները, չօգտագործված հարկային զեղչերը և հարկային տոկոսադրույքները, երբ առկա է անորոշություն ՀՀՄՍ 12, "Շահութահարկեր", ստանդարտի հաշվառման նպատակով:* | Ուժի մեջ են մտնում 2019թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է | 2019թ. հունվար | Ազդեցություն չի նախատեսվում |

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

*<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>*

*Իրական արժեքի չափում*

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:
Ընկերությունը մի շարք ակտիվներ չափում է իրական արժեքով (Ծան.9)

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Վարկային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

*(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ*

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ
- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
-

*(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների*

Ֆինանսական ակտիվներ

| | Իրական արժեքով չափվող | | Ամորտիզացված արժեքով չափվող | |
|---|---|---|---|---|
| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ | 2018 հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | - | 7,275 | 21,275 |
| Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ | 86,807 | 87,957 | - | - |
| Հաճախորդների նկատմամբ պահանջներ | - | - | 2,908 | 24,551 |
| Ընդամենը | 86,807 | 87,957 | 10,183 | 45,826 |

Ֆինանսական պարտավորություններ

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ | 2018թ հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Այլ կրեդիտորական պարտքեր | - | - | 18 | 18 |
| Ընդամենը | - | - | 18 | 18 |

*(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ*

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը և այլ կրեդիտորական պարտքերը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, դեբիտորական պարտքերի և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

*(դ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ*

Ֆինանսական գործիքների իրական արժեքի հիերարխիան ներկայացված է ստորև

Մակարդակ 2

| 31 Դեկտեմբերի | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ | 86,807 | 87,957 |
| | 86,807 | 87,957 |

Հավելված Ա-ում  ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների հետ կապված նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Հաշվետու ժամանակաշրջանում մակարդակների փոփոխություններ չեն եղել:
Գնահատման մեթոդները և նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ներդրումային զույքի իրական արժեքի չափումը սահմանելիս, ինչպես նաև առաջնային ոչ դիտելի ելակետային տվյալների և իրական արժեքի փոխհարաբերությունները ներկայացված են ստորև.

| Ֆինանսական գործիք | Գնահատման մեթոդ |
|---|---|
| Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ | Փայերի իրական արժեքը չափվում է որպես ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ |

Հաշվետու ժամանակաշրջանում իրական արժեքը չափելու համար օգտագործված գնահատման մեթոդում փոփոխություն չի եղել:

*Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ*

Ղեկավարությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում խմբի ռիսկերի կառավարման, նպատակների և քաղաքականության համար: Ղեկավարությունն ամսական կտրվածքով հաշվետվություններ է ստանում Ընկերության գլխավոր հաշվապահից՝ այսպիսով ստուգելով գործընթացների արդյունավետությունը և սահմանված նպատակների և քաղաքականության պատշաճությունը:

Ղեկավարության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով Ընկերության մրցունակության և ճկունության վրա: Սույն քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապառիկ վաճառքից: Ընկերությունը որդեգրել է նախքան նոր հաճախորդի հետ պայմանագիր կնքելը նրա պարտքային ռիսկը գնահատելու քաղաքականություն:
Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՝ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՝ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար:
Ընկերության պարտքային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| | 2018թ.<br>հազ. դրամ | 2017թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7,275 | 21,275 |
| Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ | 86,807 | 87,957 |
| Հաճախորդների նկատմամբ պահանջներ | 2,908 | 24,551 |
| | 96,990 | 133,783 |

*Դրամական միջոցներ բանկում*

Ընկերությունը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ընկերության կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունները վստահելի են և հեղինակավոր:

Զգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում

| | 2018թ.<br>հազ. դրամ | 2017թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Բանկ 1 | 7,275 | 21,270 |
| Բանկ 2 | - | 5 |
| | 7,275 | 21,275 |

*Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:
Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

| | Մինչև 3 ամիս<br>հազ. դրամ | 3-ից 12 ամիս<br>հազ. դրամ | 1-ից 2 տարի<br>հազ. դրամ | 2-ից 5 տարի<br>հազ. դրամ | 5 տարուց ավել<br>հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 18 | - | - | - | - |
| | 18 | - | - | - | - |

| | Մինչև 3 ամիս<br>հազ. դրամ | 3-ից 12 ամիս<br>հազ. դրամ | 1-ից 2 տարի<br>հազ. դրամ | 2-ից 5 տարի<br>հազ. դրամ | 5 տարուց ավել<br>հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 18 | - | - | - | - |
| | 18 | - | - | - | - |

*Կապիտալի ռիսկի կառավարում*

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: ՀՀ կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, ներդրումային կազմակերպությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 50,000 հազար ՀՀ դրամ նվազագույն ընդհանուր կապիտալ (2017թ. դեկտեմբերի 31-ին՝ 50,000 հազար ՀՀ դրամ):

Հետնյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության կապիտալ ռեսուրսները կապիտալի համարժեքության նպատակներով:

## 5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հավատարմագրային կառավարման վճար և պարգևավճար | 13,511 | 37,358 |
| Այլ միջնորդավճարներ | 15 | - |
| | 13,526 | 37,358 |

Ընկերությունը հավատարմագրային կառավարման ծառայություններից հասույթը ճանաչվում է կառավարման ժամանակահատվածի ընթացքում պարբերական հիմունքով՝ կառավարման ծառայության դիմաց վարձատրության բանաձևի և տվյալ ժամանակաշրջանի արդյունքների հիման վրա:
Կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումների հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:
Ընկերությունը հավատարմագրային կառավարման ծառայություններից հասույթը հավաքագրումը սովորաբար կատարում է եռամսյակին հաջորդող ամսվա ընթացքում:

## 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից եկամուտ | 8,349 | 6,995 |
| Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից ծախս | (63) | (785) |
| | 8,286 | 6,210 |

## 7. Ընդհանուր գործառնական և վարչական ծախսեր

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Անձնակազմի գծով ծախսեր | 15,301 | 13,836 |
| Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր | 6,120 | 6,233 |
| Գործառնական վարձակալության գծով ծախսեր | 5,400 | 5,400 |
| Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր | 1,283 | 1,273 |
| Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր | 562 | 561 |
| Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր | 60 | 89 |
| Այլ գործառնական ծախսեր | 90 | 90 |
| | 28,816 | 27,482 |

### Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար՝ Ընկերության տնօրենը: Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատավարձ, այլ հատուցումներ | 5,184 | 2,514 |

## 8. Շահութահարկի գծով ծախս

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| *Հարկային ծախս* | | |
| **Ընթացիկ հարկային ծախսեր** | | |
| Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկ | - | 2,532 |
| **Ընդամենը ընթացիկ հարկ** | - | 2,544 |
| **Հետաձգված հարկային ծախս** | | |
| Ժամանակավոր տարբերությունների ծագումը և հակադարձումը (Ծան. 10) | (219) | (192) |
| Փոխհատուցվող հարկային վնաս | (2,904) | - |
| **Ընդամենը հարկային ծախս/ (եկամուտ)** | (3,123) | 2,340 |

Տարվա փաստացի հարկային ծախսերի և Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի սահմանված դրույքի միջև տարբերության պատճառները ներկայացված են ստորև.

| | 2018թ հազ. դրամ | Արդյուն ավետ դրույքա չափ | 2017թ. հազ. դրամ | Արդյուն ավետ դրույքա չափ |
|---|---|---|---|---|
| Տարվա շահույթ/ (վնաս) | (4,365) | | 15,225 | |
| Շահութահարկի գծով ծախս(եկամուտ) | (3,123) | | 2,340 | |
| Շահույթ/ (վնաս) նախքան հարկումը | (7,488) | | 17,565 | |
| Շահութահարկ՝ հաշվարկված Ընկերության տեղական շահութահարկի դրույքաչափով 20.0% (2017թ.՝ 20.0%) | (1,498) | 20 | 3,513 | 20 |
| Շահութահարկի առումով չհարկվող եկամուտների/ չնվազեցվող ծախսերի ազդեցությունը | (1,625) | 22 | (1,173) | (7) |
| Ընդամենը հարկային ծախս/(եկամուտ) | (3,123) | 42 | 2,340 | 13 |

9. Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

| | 2018թ.<br>հազ. դրամ | 2017թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Փայեր | 86,807 | 87,957 |
| | 86,807 | 87,957 |

10. Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկը ժամանակավոր տարբերությունների մասով հաշվարկվում է ամբողջությամբ ըստ պարտավորությունների մեթոդի՝ 20% հարկադրույքի կիրառմամբ (2017թ. դրությամբ՝ 20%)։ Հետաձգված հարկային ակտիվների շարժը ներկայացված է ստորև.

| | 2018թ.<br>հազ. դրամ | 2017թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Մնացորդ առ 1-ը հունվարի | 564 | 372 |
| Շահույթում կամ վնասում ճանաչված հարկային ծախսեր | - 3,123 | 192 |
| Այլ համապարփակ եկամտում ճանաչված (վնասներ) օգուտներ | - | - |
| Մնացորդ առ 31-ը դեկտեմբերի | 3,687 | 564 |

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են բոլոր հարկային կորուստների և այլ ժամանակավոր տարբերությունների գծով, այն դեպքերում, երբ, ըստ ղեկավարության գնահատման՝ հավանական է, որ հետաձգված հարկային ակտիվը կվերականգնվի։

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժը (նախքան ՀՀՄՍ 12-ով թույլատրելի մնացորդների հաշվանցում կատարելը)։

Հետաձգված հարկային ակտիվների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

| | Մնացորդն առ 31.12.17 դրությամբ հազ. դրամ | 2018թ. շահույթում կամ վնասում ճանաչված հազ. դրամ | Մնացորդն առ 31.12.18 դրությամբ հազ. դրամ |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝* | 622 | 156 | 778 |
| Ստեղծված պահուստների գծով | 622 | 156 | 778 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝* | (58) | 63 | 5 |
| Հիմնական միջոցների գծով | (58) | 63 | 5 |
| *Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն* | 564 | 219 | 783 |
| *Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս* | - | 2,904 | 2,904 |
| *Ընդամենը զուտ հետաձգված հարկային ակտիվի (պարտավորության) շարժ* | 564 | 3,123 | 3,687 |

11. Այլ ակտիվներ

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հաճախորդների նկատմամբ պահանջներ | 2,908 | 24,551 |
| Շահութահարկի գծով կանխավճար | 2,025 | 2,137 |
| Այլ | 581 | 4.171 |
| | 5,514 | 26,692 |

12. Պահուստներ

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ | 3,109 | 2,292 |
| Պահուստին կատարված մասնահանումներ | 2,906 | 3,015 |
| Պահուստի օգտագործում | (2,126) | (2,198) |
| Վերջնական մնացորդ | 3,889 | 3,109 |
| Արձակուրդայինի գծով | 2,089 | 1,429 |
| Աուդիտի գծով | 1,800 | 1,680 |

13. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ներդրումների գծով պարտավորություններ (ինչպես նաև՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Ընկերությունը որևէ կողմի պարտավորությունների համար երաշխավորություն չի տրամադրել 31.12.2018թ. դրությամբ (նույնը 31.12.2017թ. դրությամբ):

Ընկերության հանդեպ հարուցված դատական հայցերը 31.12.2018թ. դրությամբ չկան (նույնը 31.12.2017թ. դրությամբ):

## 14. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

*Հիմնական գործունեությունից եկամուտ*

Հավատարմագրային կառավարման ծառայություններից հասույթը ճանաչվում է կառավարման ժամանակահատվածի ընթացքում պարբերական հիմունքով՝ կառավարման ծառայության դիմաց վարձատրության բանաձևի և տվյալ ժամանակաշրջանի արդյունքների հիման վրա:
Կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումների հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:
Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները վերաբերվում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ, և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանասական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ֆոնդում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

*Արտարժութային գործարքներ*

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:
Արտարժութային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

*Տոկոսային եկամուտը և ծախսը*

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ ներառյալ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

*Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ*

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների

տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

*Ֆինանսական գործիքներ*

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:
Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՉ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

*«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ.*

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաճման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՉ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:
Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե
•այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
•սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ

•դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:
Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝
• այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
•դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:
Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

*Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.*

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

*Ֆինանսական պարտավորություններ*

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

*Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ.*

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:
Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝
•այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետզնման նպատակով, կամ
•սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ

●այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:
Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չափվող, եթե՝
●նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
● ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
●Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:
ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

*Այլ ֆինանսական պարտավորություններ*

Այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:
Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

*Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.*

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են:
Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

*Հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:
Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:
Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):
Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա

տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա 1-5 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ 5-8 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

*Շահաբաժիններ*

Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են իրավականորեն վճարման ենթակա. բաժնետերերին վճարվող միջանկյալ շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հայտարարվում են տնօրենների կողմից, վերջնական շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հաստատվում են բաժնետերերի կողմից տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ:

*Հետաձգված հարկեր*

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուդվիլի սկզբնական ճանաչումից:
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա:
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված

իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

*Պահուստներ*

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը
Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ 23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:
ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր
Վերնագիր
ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները

հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ տոկոսային ծախսերի կազմում:

Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական ոչ դիտարկելի ելակետային տվյալները, ինչպես նաև ոչ դիտարկելի ելակետային տվյալների և իրական արժեքի միջև փոխհարաբերությունը:

| Հոդված | Իրական արժեք, հազար դրամ | Գնահատման մեթոդ | Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ | Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ |
|---|---|---|---|---|
| Փայեր | 86,807 | Փայերի իրական արժեքը չափվում է որպես ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ | Մակարդակ 2 | |
| Կրեդիտորական պարտքեր | 18 | Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: | Մակարդակ 3 | Չկան այդպիսիք |
| Դեբիտորական պարտքեր | 2,908 | Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: | Մակարդակ 3 | Չկան այդպիսիք |